րան մը, որմէ կը հասկցուի Գաբրիէլ վրդ.ին ինքնութիւնը, «ի պատրք. Տեառն Գրիգորի հայրապետին գրեցաւ. կազմեցաւ եւ արծաթապատ զարգարեցաւ սուրբ աւետարանս, եզաւ ի սբ. յԵրուսաղէմ ի սբ. Յակոբ՝ երկնահանգէտ յաթոռս Յո.եան և է յիշատակ Ակնցի. որ եւ Պալաթցի Մարուքէյի Թոռ Գաբրիէլ մեղաւոր կրկ իբր վրդպ.ին, որ է որդի Յունանենց մհի. Գասպարին և մհի. Սառային. յիշատակ յաւիտենական. և օծաւ վասն քաւութեան մեղացն իւրոց. ծնողացն և ամենայն ազգայնոցն և գծողի սորին Ցղնցի տէր Յակոբին, ...»: (Խապ. Ցուց. տետր, Դ. էջ 298): 1721ին, իր յիշատակին նուիրած են ՄՋ. Թ. 1725 ձեռագիր սաղմոսը. (տե՛ս յիշատակարանը նոյն ձեռ.ին):

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ԱՆՈՅՇԵԱՆ. ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Ծ. 1845ին. Կ.Պոլիս, Աչկ. Պէզճեան վարժ.ի Գում-Գափուի և Ս.Յակոբի ժառ. վարժ.ի 1865ին. Ձռ. 1871ին. դիւանապետ (1871-78). վարած է Գում-Գափուի գրսի Ս.Յարութեան եկեղեցիի քարոզչութիւնը և վարժարանաց տեսչութիւնը 1887 ին. Նւ. Հնդկաց (1890-93). անդամ ՏՆ. ժողովի և ՏԴ. 1895ին. Պատրքն. փոխ. Պաղտատի 1902 ին. Լապ. 1903 ին. կը վախճանի 1904 ին:

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ԵԹՈՎՊԱՑԻ. — Մբ. սպասաւոր Կիրակոս արքեպիսկոպոսի, որմէ հայերէն կ'ուսանի. Ձռ. 1843ին. վանքին կողմէ Եթովպիա կը ղրկուի, իբր Նւ. 1850 ին. Եգիպտոսի մէջ կը վախճանի 1855 ին, և կը թաղուի Ս.Մինասի մատրան ուսադրան առջեւը, եկեղեցականաց թաղին մէջ: Իր տապանագիրն է.

«Գաբրիէլ բաբունի՝ հապէչ կարգաւոր.
Ի Հայոց առեալ զիմ կարգ հոգեոր.
Ցիրս ինչ Սաղիմեան ուխտին կարեոր
Մինչ յԵթովպիա՝ գլուայ ուղեոր.
Ի Աստուածեան վճռոյն սուր փաղակաւոր,
Կորեցայ ընդ մէջ և կամ աստ ի խոր.
Եւ հոգին չուեաց յաւիտենին հօր
Ո՜ տայր Տէր լինել, առ քեզ մերձաւոր:
Ի 1855 Մայիս 30ի 42 յամս հասակի:»

ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ԽԱՋԱՏՈՒՐԵԱՆ.—Մբ. Մշոյ Ս. Կարապետ վանքին, 1867 ին կը տարագրուի Ս. Յակոբի վանքը եւ, 1868ին ներումով կը մեկնի Պոլիս (Սիոն 1867. էջ 14.):